

կումն ունի դժվարի մոայլ գոյները, ջախջախուած էրերը, կոտը-  
րած սրտերը, կորացած մէջքերը, հանգած աչքերը և առհասա-  
բակ դժվարի ամեն ինչ, որ ճնշուած է, աղքատիկ ու թշուառ:  
Այդ երևոյթները հեղինակը դիմել է ուշադրութեամբ, դրոշմել  
է յիշողութեան մէջ և կարողանում է վերաբատադրել կենդանի  
կերպով:

Տ. Յ.

Յարուրիւն եսայեան՝ «Կենացի խորշերից», պատկերներ, 101 էր., գ. 20  
կ., Սլեքսանդրօպոլ, 1903:

«Կեանքի խորշերից»-ը բաղկացած է եօթ հատ պատկեր-  
ներից.—1) Օքայի հերոսները, 2) Հոգեհացը, 3) Անմեղզոհ, 4)  
Սիրոյ յարութիւն, 5) Բանտարկեալները, 6) Բժիշկը և 7)  
Ծառախօսը:

«Օքայի հերոսները» մի եկեղեցու տօնի բաւական աջող  
նկարագրութիւն է, որի մէջ երեսն է զալիս մեր ժողովրդի  
ստորին դասակարգն իր շատ ցաւերով, մնութիապաշտութիւն-  
ներով, փշացած ու լաւ կողմերով:

«Հոգեհացը» ներկայացնում է մի նշանած տղայի «զուռ-  
նա-զաւալով» թաղումից յետոյ նրա տանը կատարուող քէֆը՝  
մեռածի մօր ու նշանածի աչքերի առաջ: Այդ սովորութիւնը  
կայ թիգլիսում, բայց թւում է, թէ այս պատմուածքում բա-  
ւական չափազանցացրուած է:

«Ամեղ զոհ»-ի բովանդակութիւնը հետեւեալն է. Ստեփան  
Մածառեանին Գրիգոր աղան ասա հազար ըուբլի է պարտ,  
բայց Գրիգոր աղան ոչ միայն ուրանում, ժխտում է իր պարտ-  
քի գոյութիւնը, այլև Ստեփանի վզին է պարտք զնում: Ստե-  
փանը վճռում է միւս օրն սպանել նրան: Գիշերը քնի մէջ զա-  
ռանցելով՝ նա ուզում է իրը թէ խեղդել Գրիգոր աղային, բայց  
խեղդում է հարազատ կնոջը: Նրան դատում են և որպէս մար-  
դասպանի՝ դատապարտում տաժանակիր աշխատանքի: Մի քիչ  
տարօրինակ է թւում հանգոյցի այսպիսի լուծումը:

«Բանտարկեալները» գրուածքում երկու կալանաւորներ  
իրար պատմում են իրանց բանտարկուելու պատճառները: Մէ-  
կըն սպանել է իր տանտիրոջ որդուն, որ փորձ էր արել նրա  
հաւատարիմ կնոջը բռնաբարելու, իսկ միւսն անաջող փորձ է  
արել սպանելու «մի ոմն բէալիստ»-ի և իր սիրած աղջկան,  
որովհետեւ նրանք յանդգնել էին իրար սիրել կամ գուցէ միայն

սիրախաղութիւն անել. մանաւանդ որ աղջիկը յուսախար էր արել նրան և գրկել (<sup>9</sup>) բարձրագոյն կրթութիւնից, ինչպէս ասում է. «Չը նայած՝ որ գտնուեցան բարերարներ, ինձ ուղարկելու ուսումն շարունակելու, բայց ես ընդմիշտ մերժեցի այդ թողեցի բարձրագոյն ուսում ստանալուս միտքն ի սէր եւայի, և սպասեցի նրա աւարտելուն, որ ամուսնանանք»:

«Բժիշկը» պատկերում դուքս է բերուած կոպէկի համար հոգին տուող, հարստի առաջ երեքտակ ծալուող, իսկ իսեղ աղքատին շան տեղ չը գնող մի բժիշկ, որը հրաժարւում է այցելել մի աղքատ պառաւի շարդուած ու հոգեվարքի մէջ ընկած որդուն, մինչև չը ստանայ իր երեք բուրլի այցեղինը: Բժշկուելու եկած հիւանդները խոճալով պառաւին՝ իրանց մէջ ժողովում են բժշկի պահանջած երեք բուրլին, բժիշկը վերցընում է այդ փողը, բայց իր այցը կատարում է հետևեալ օրը միայն, երբ հիւանդն արդէն մեռած է լինում:

«Ճառախօսու» մի անաջող նմանողութիւն է Զեխովիի «Հոեսոր» պատմուածքին: «Ճառախօս»-ում դուքս բերուած երեւյթը—ամէն ծակուծուկ մտնել և ծառեր արտասանել—մեր մէջ գոյութիւն չ'ունի:

«Սիրոյ յարութիւնը» կատարում է զատկի կիրակի օրը: Օ.քաղաքի տներից մէկում ինն հայ ուսանող ողջերթի խնջոյք էին սարքել ի պատիւ իրանցից երեքի, որոնք համալսարանն պարտած լինելով՝ հայրենիք էին դառնալու: Այդ երեքից մէկն—Սրտէմ Լուսնակեան—ինչնչոյքը կիսատ թողնելով՝ վերագունում է իր բնակարանը հանգստանալու, այստեղից էլ ուղղուում ծովափ՝ մաքուր օգ զնչելու: Այդտեղ նա «ակամայ» ընկնում է երազանքի մէջ: Յիշում է իր մանկութիւնը, թէ ինչպէս սիրեց մի աղջկայ և մինչև անգամ չը գնաց բարձրագոյն կրթութիւն ստանալու, այլ «սկսեց հոգալ ամուսնութեան մասին», ճիշտ և ճիշտ այնպէս, ինչպէս քիչ առաջ պատմում էր բանտարկեաներից մէկը միախին: Բայց այդ աղջիկը փչացած դուրս եկաւ, և Լուսնակեանը խզեց վերջինիս հետ իր բոլոր կապերն ու փոխանակ սպանութեան փորձ անելու և բանտարկուելու՝ «ճանապարհուեց դէպի Ռուսաստան ուսումն շարունակելու... Իսկ օրիորդ Հովհանմէ Կուռօնեանը մի քանի ամիս յետոյ անյայտացաւ մի երիտասարդի հետ, և ոչ ոք չ'իմացաւ թէ ուր գնաց նա... Այն օրից անցել էին հինգ բոլորակ տարեներ, և այժմ Սրտէմ Լուսնակեանը բոլորովին մոռացած իր առաջին սիրախափառութիւնը, աւարտում էր համալսարանը, և նոր իդէաներով ոգեսրուած, վերադանում էր հայրենիք գործելու համար»: Իսկ առայժմ ուզում էր տուն գնալ, երբ «յան-

կարծ մի խուլ շնորհ և մարդկային ձայն հասաւ նրա ականջ-ներին». նա նայեց շուրջը, բայց ոչինչ չը նկատեց. «Ալիքներն կատաղել են, մտածեց ու շարունակեց քայլել: Բայց դարձեալ նրա ականջներին հասաւ մի ձայն, որ նման էր կանացի հեկեկանքներին»: Լուսնակեանը կանգ առաւ, ականջ դրաւ ու դիմեց դէպի ձայնը: Եւ ի՞նչ... բանից դուրս եկաւ, որ այն աղջկը, որի մասին հէնց նոր էր մտածում Լուսնակեանը, ինքը—օրիորդ Հոփիսիմէ Կուռոնեանը—եկել էր Օ. քաղաքը՝ յատկապէս ծովն ընկնելու և խեղզուելու քից: Թող ընթերցողը չը կարծէ, թէ օրիորդն իմացած լինելով որ Լուսնակեանը Օ.-ում է գտնւում, նրա պատճառով էր արդատեղ եկել ոչ, այդպիսի բան չը կայ, նա գուցէ Լուսնակեանին մտքովն անգամ չէր անցկացրել այդ հինգ տարւայ ընթացքում, այլ եկել էր այդտեղ հէնց այնպէս... Եւ Լուսնակեանը ոչ միայն ազատեց նրան մահից, այլև նրա մէջ յարութիւն առաւ նախկին սէրը մի քանի վայրկեանում, և նա մինչև անգամ կուռթեան առաւ այն փչացած աղջկան, որը սակայն «Ակսեց ինքնակրթութեամբ նախապատրաստուել իսկական (ոչ թէ կեղծ) մայր և տանտիկին լինելու համար...»

Պ. Եսայեանի պատկերները խակ են, բայց երեսում է, որ երիտասարդ հեղինակը գրելու շնորհը ունի, սակայն անփորձ լինելուց՝ նրա գրչի արտադրութիւնները զատ-զատ դէպերի նկարագրութիւններ են և գեղարուեստական ամբողջութիւն չեն կազմում. հարցերը շօշափուած են թոռոցիկ կերպով, մակերեսոյթօրէն, տիպի ամենատարրական ուսումնասիրութիւն անգամ չը կայ. Լեզուն անմշակ է, խառնու օտար—մանաւանդ թուրքերէն—բառերով: Բերենք մի քանի օրինակներ. «Հին մօդայի տարազով» (մողա հէնց տարազ է նշանակում. ուրեմն եթէ եւրոպական բառը թարգմանենք հայերէն, դուրս կը գայ այսպիսի բան.—«Հին տարազի տարազով»... Զը լինի՞ թէ խօսքը մեր հին «Տարազ» թերթի նոր տարազի մասին է. բայց այդ դէպերում պէտք էր «տարազ»-ներից մէկն ու մէկը չակերտներում դնել և գրել գլխատառով): «մի խօսքով հասարակ դասակարգի համար մեծ եղելութիւն է»: «դէ հիմայ դու տես թամաշէն, իսալին էլ էս էր ուզում... կանայք հեռու փախան, իսկ տղամարդիկն էլ չէին ուզում նրանց բաժանել.—այլ հեռու կանգնած ծիծաղում էին այդ տեսարանի վրայ» (15 եր.). «Ջիրգիր», ուրիշ մի քանի տեղ՝ «գրպանահան» (փոխանակ «գրպանահատ» գրելու). «Քաղակ» (մրգավաճառ կամ նպարավաճառ). «Նաղարա» (թըմ-

բուկ). «գալլաք» (սափրիչ). «տակսա կամ սակագին» (չէ՞ որ տակսա հէնց սակագին է նշանակում, էլ ի՞նչ կամ է). «մուշտարի». «դուխի» «բռնաւոր» (կալանաւոր բառի իմաստով), և այլն ևայլն, Այլ բան է, եթէ այս բառերը ժողովրդի բերանից հնչելիս լինէին, բայց գործ է ածում ինքը հեղինակը:

Թիֆլիսի բարբառով արտայալյուած տեղերը խճողուած են գրական լեզուով և ուրիշ գաւառաբարբառով. «Ան հոգիս առ, Աստօծ, ան ազատիր էս վիճակից, իմ էրէսս քու ոտին տակին» (20 եր.), «հերիք լաց ըլիս, մենք ըստի, էս աշխարքում ենք քէֆ մնում, որ Օսէին էլ երկնքումը քէֆ անի» (29 եր.), և այլն:

Սըրբագրութիւնն անտանելի է. գրաշարի և սըրբագրչի ձեռքի տակ «աղվոկատին» խօսքը յանկարծ դարձել է «այդ վախկոտին». մինչև անգամ վրիպակիները սիալ են տպուած. «տպած է՝ ջերմառանդութեամբ, պէտք է լինի՝ ջերմեռանդութեամբ», իբր թէ երկրորդ բառն աւելի ճիշտ է, քան առաջինը...

Ա.Թ.Ա.

«Ճռովմայեցի իմաստ. Էպիկանեփի կեանին ու վարդապետութիւնը», թաղմ. Զաւեն Վարդապետ, 1903թ., Վաղարշապատ.

Քաղցածին հաց պէտք է տալ, ծարաւին ջուր. սրանք յաւիտենական նշմարտութիւններ են. Ծարաւի համար մի ամբողջ դասախոսութիւն բարեգործութեան մասին չ'արժէ մի կաթիւ ջուր: Մենք ճիշտ այդ գրութեան մէջ ենք: Ընթերցող հայ հասարակութիւնը կարիք ունի ժողովրդական ընթերցանութեան յարմար գրքերի, իսկ մենք առաջարկում ենք այդ ծարաւն յագեցնելու համար ոչ թէ մարսական, այլ կոշտ ու մոշտ բաներ, որ բկին կանգնի ներս չ'երթայ: Ահա այս տպաւորութիւնն ստացանք էպիկատեմի գրքի հրատարակութիւնից: Էպիկատեմի իմաստութիւնը լաւ էր իր ժամանակի համար: Մեր մատաղ սերունդը նրա երբեմն այլանդակ (ներկայ հասկացողութեամբ) խրատներին կարօտ չէ և Աստուած չ'անի որ նրանով ղեկավարուի: Այդ սերունդի և երիտասարդութեան համար ի՞նչ գեղեցիկ դաս է «Չասես թէ վնասուեցի, երբ փոխես՝ էշը ձիու, ոչխարը եղան... այդպիսի դէպքերում աւելի ես օգտում, քան վնասում: Եթէ այդ չես հասկանում, չես հասկանում և քո բախտաւորութիւնը, երջանկութիւնը»\*) (36 երես): Ներկայ լեզ-

\*) Այդ հատուածը «Բարեկործութիւնը կորուս յէ» գլուխից ենք բաղել: